## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի ցեմենտի արտադրության ընդլանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ լսում)**

**22.05.2026թ** **Արագածավան բնակավայր**

2026 թվականի մայիսի 22 - ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի ցեմենտի արտադրության ընդլայնման կատարվելիք աշխատանքների վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումը:

Լսումների ընթացքում, որը տեսաձայնանագրվել է, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ տվյալ գործի փորձագետ Ք. Հարությունյանի կողմից հակիրճ ներկայացվեց փորձաքննական գործընթացի իրականացման իրավական կարգավորումները, փորձաքննության տվյալ փուլում առկա բնապահպանական ռիսկերի նվազեցման և չեզոքացման վերաբերյալ կարծիքների մասին տեղեկատվություն, հայտնեց, որ հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին, տարբեր գերատեսչություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին կարծիքներ ստանալու նպատակով: Նա նշեց, որ տրամադրված բոլոր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները հաշվի են առնվել և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը լրամշակվել է: Այս քննարկումների նպատակն է հաշվի առնել ազդակիր համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները ցեմենտի արտադրության ընդլայնման Շմագ հաշվետվության վերաբերյալ: Նա հայտնեց, որ նախատեսվող գործունեությունը համաձայն ՀՀ ՇՄԱԳ օրենքի՝ Ա կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակ է, որի համար սահմանված է 80օր փորձաքննության իրականացման ժամկետ, որից հետո տրվում է փորձաքննական եզրակացություն: Փաստեց, որ շատ կարևոր է համարում նշել նաև, որ փորձաքննության գործընթացում օրենքի պահանջին համապատասխան իրականացվել է «ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊ ընկերության ցեմենտի արտադրության տարածքի տեղազննում և ի զարմանս և հուրախություն մեզ գործող գործարանը աշխատում է լավ պայմաններում, տարածքում փոշի չի հայտնաբերվել: Նա խոսքը փոխանցեց «ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչներին՝ Գ. Հակոբյանին և Ա. Ավագյանին: Գ.Հակոբյանը հայտնեց, որ ցեմենտի արտադրությունը գործում է ավելի քան մեկ տարի և ինչպես

նշվեց տեղազննման արդյունքները ապացուցում են, որ նախկին Շմագ հաշվետվությամբ նախատեսված բնապահպանական միջոցառումները ընկերության կողմից իրականացվել և ապահովվել են շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մեղմացումը և բացառումը: Նա նշեց, որ ընկերությունը կատարել է նաև հաշվետվությունով ստանձնած բոլոր սոցիալական պարտավորությունները, ինչը հաստատեց Արագածավան բնակավայրի վարչական ղեկավար Ա. Նազարյանը, փաստելով ընկերության ակտիվ մասնակցությունը Արագածավան բնակավայրի խնդիրների լուծմանը: Ք. Հարությունյանը հարց բարձրացրեց խմելու կենցաղային ջրի վերաբերյալ դիտողության վերաբերյալ խնդրին, ինչին ի պատասխան տարածքի սեփականատեր «Լեվադան» ՍՊԸ-ի բաժնետեր Կ. Թադևոսյանը պարզաբանեց, որ Արագածավան բնակավայրի վարչական տարածքի երեք խորքային հորերից մեկը կահավորված է խորքային պոմպով ընկերության կողմից և գտնվում է ընկերության տարածքում, որից տեխնիկական նպատակներով օգտվելու համար ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է ջրօգտագործման թույլտվություն, իսկ խմելու ջրի համար ընկերությունը պայմանագիր է կնքել Թալին համայնքի հետ: Ընկերության և ցեմենտի արտադրության տարածքում առկա են թերմոս-տարողություններ, որոնք օգտագործվում են խմելու ջրի համար: Ընկերության կողմից բոլոր վճարումները խմելու և տեխնիկական ջրի համար իրականացվում են 30- 40 տարուց ավել ժամանակահատվածում, համաձայնեցվելով յուրաքանչյուր տարվա ծավալները և սակագները: Թալին համայնքի վարչական ղեկավարի տեղակալ Գ. Թադևոսյանը, Արագածավան բնակավայրի վարչական ղեկավար Ա. Նազարյանը շնորհակալություն հայտնեցին «ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊ ընկերությանը համայնքին ցուցաբերած աջակցության և տեղական ավելի էժան հումքի արտադրության զարգացման համար: Ա. Ավագյանը հայտնեց, որ ցեմենտի ընդլայնված արտադրությունում աշխատելու են 57 աշխատակից, որոնք հիմնականում լինելու են Արագածավան գյուղի բնակիչներ, ինչի արդյունքում կլուծվի 300-ից ավել բնակիչների սոցիալական խնդիրները և կնվազեցվի բնակիչների արտագաղթումը:

Համայնքի ներկայացուցիչները ամփոփման ընթաքում ողջունեցին «ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊ ընկերության նախաձեռնությունը:

«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը իր հերթին հաստատեց, որ դրական փորձաքննական եզրակացության տրամադրման դեպքում նախագծային փաթեթով նախատեսված բոլոր ստանձնած պարտավորությունները կիրականացվեն:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչները, Թալին համայնքի վարչական ղեկավարի տեղակալ Գ. Թադևոսյանը, Արագածավան

բնակավայրի վարչական ղեկավար Ա. Նազարյանը և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները և տեսաձայնագրությունը կցվում են սույն արձանագրությանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Ք. Հարությունյան

«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Գրիգորյան